ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-24/49 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **12 սեպտեմբերի 2024թ.**

2024թ-ի սեպտեմբերի 5-12ը ՀՀ, ք. Երևան, Ալիխանյան եղբայրների փող., 2 շենք հասցեում գտնվող «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-24/49 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Լ. Ավետիսյան՝	Հիմնադրամի արտադրատնտեսական բաժնի ղեկավար,
Տ. Քոթանջյան՝	Հիմնադրամի գիտական խմբի ղեկավար,
Ա. Բաղալյան՝	Հիմնադրամի կրտսեր գիտաշխատող,
Ն. Շահնազարյան՝	Հիմնադրամի ավագ հաշվապահ.

Նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար՝ «ՓՐՈՄՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վ. Էլոյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի չորս անդամները՝ բացակայում էր հանձնաժողովի անդամ Ա. Բաղրամյանը, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լ. Ավետիսյանը:

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-24/49 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի, ներկայացված հայտերի բացման, գնահատման, առաջարկված գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ որոշելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1.ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-24/49 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ և ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Լ. Ավետիսյանը նիստը հայտարարեց բացված և հայտնեց տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների վերաբերյալ տեղեկատվությունը:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ)
1	Ճառագայթման դոզայի հաշվիչ՝ բարձր չափման ճշտությամբ	300000
2	Մագնիսական խառնիչ	250000

ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-24/49 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2024 թվականի սեպտեմբերի 5-ին, ժամը «17:30»-ին: Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և հիմնավորումներ չեն ներկայացվել:

ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-24/49 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Հասցե	Էլ. փոստ
1	«Մեդիսար» ՍՊԸ	ք. Երևան Գետառի 4/9	sales@medisar.am, info@medisar.am
2	«Օրգանիքս» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Հասրաթյան 7	customer.organix@gmail.com
3	Ա/Ձ Վաչե Վրեժի Նալբանդյան	ք. Երևան, Ազատության պող 24/12	nalbandyan-vache@rambler.ru
4	«ՍՄԱՌ» ՍՊԸ	Գ.Ծովասար, 1-ին Փ. /S/ 1 Մարտունի 1401 Մարտունի Գեղարքունիք Հայաստան	smar2024@mail.ru
5	«ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ	ք. Երևան, Բաշինջաղյան 2-րդ նրբ. 10շ. Բն 58	extra.mot2024@gmail.com

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

1. Հայտ/եր/ը կազմվել և ներկայացվել են ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-24/49 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.
2. Ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ՝

• «Մեդիսար» ՍՊԸ-ի՝ մասնակցության հայտում ներառված գնման ընթացակարգին մասնակցելու դիմումում բացակայում են հրավերի հավելված 1-ով պահանջվող մասնակցի բանկային վավերապայմանները՝ սպասարկող բանկի անվանումը և հաշվեհամարը, միաժամանակ բացակայում է հավելված 1-ի 2-րդ կետով սահմանված մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի ներկայացման վերաբերյալ պարբերությունը:

• «Օրգանիքս» ՍՊԸ-ի՝ մասնակցության հայտում ներառված գնման ընթացակարգին մասնակցելու դիմումում բացակայում են հրավերի հավելված 1-ով պահանջվող մասնակցի բանկային վավերապայմանները՝ սպասարկող բանկի անվանումը և հաշվեհամարը:

• Վաչե Նալբանդյան Վրեժի Ա/Ձ-ի՝ մասնակցության հայտում ներառված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ համաձայն հրավերի հավելված 1.1-ի, 2-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանման, ապրանքային նշանի, մոդելի և արտադրողի անվանման փոխարեն լրացվել է գնման առարկա հանդիսացող ապրանքի անվանում: Անհրաժեշտ է շտկել և ներկայացնել նշված չափաբաժնի մասով հրավերի պահանջներին բավարարող առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանման, ապրանքային նշանի, մոդելի և արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվություն:

• «ՍՄԱՌ» ՍՊԸ-ի՝ ներկայացված ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-24/49 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցության դիմումը՝ համաձայն հրավերի հավելված 1-ի, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հրավերի հավելված 1.1-ի և գնային առաջարկը՝ համաձայն հրավերի հավելված 2-ի չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ լրացրած չէ մասնակցի անվանումը, ղեկավարի պաշտոնը և անուն ազգանունը:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների ընտրված և այդպիսին չճանաչված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

Չափաբաժնի		Մասնակցի		Մասնակիցների առաջարկած գները		
N	Անվանում	անվանում	Ընտրված մասնակցի նշում՝ «X»	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	Ճառագայթման դոզայի հաշվիչ՝ բարձր չափման ճշտությամբ	-	-	-	-	-
2	Մագնիսական խառնիչ	Օրգանիքս ՍՊԸ	X	125000	25000	150000
		Մեդիսար ՍՊԸ		166666,67	33333,33	200000
		ՍՄԱՌ ՍՊԸ		170000	34000	204000
		Վաչե Նալբանդյան Վրեժի Ա/Ձ		195000	0	195000
		«ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ		203333,33	40666,67	244000

Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն.

2. «ՍՄԱՌ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-24/49 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.2 կետի համաձայն՝ գնային առաջարկը ներկայացված չէ հրավերի պահանջներին համապատասխան:

3. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և ծանուցմամբ առաջարկել մասնակիցներին հրավերով սահմանված կարգով իրականացնել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունների շտկում և հանձնաժողովին ներկայացնել փաստաթղթերի շտկված տարբերակները:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Մասնակիցների կողմից հրավերով սահմանված կարգով և ժամկետներում իրականացվել են շտկման ենթակա անհամապատասխանությունների շտկումները և ներկայացվել են փաստաթղթերի շտկված տարբերակները:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված հայտերը գնահատել բավարար՝ բացառությամբ «ՍՄԱՌ» ՍՊԸ-ի հայտի:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. ԸՆՏՐՎԱԾ և ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Որպես ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ հայտարարել Աղյուսակում համապատասխան տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

2. Ընթացակարգը 1-ին, չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և ընթացակարգը 1-ին, չափաբաժինի մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը համաձայն հավելվածի:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Լ. Ավետիսյան

Հանձնաժողովի անդամներ՝

Տ. Քոթանջյան

Ա. Բաղալյան

Ն. Շահնազարյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Վ. Էլոյան